Շրջակա միջավայրի նախարար
պարոն Հակոբ Սիմիդյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**1.Գործուղվող անձի անունը, ազգանունը**
Գայանե Գաբրիելյան

**2.Զբաղեցրած պաշտոնը**
Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

**3.Գործուղման վայրը և ժամկետը**
Հունգարիա (Բուդապեշտ)
2023 թվականի հուլիսի 5-ից 7-ը

**4. Հրավիրող կողմը**
ԱՀԿ Եվրոպայի տարածաշրջանի գրասենյակ
Հունգարիայի կառավարություն
ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով
ՄԱԿ-ի բնապահպանական ծրագիր

**5. Գործուղման նպատակը**
Մասնակցություն Բուդապեշտում կայանալիք ԱՀԿ Եվրոպայի տարածաշրջանի անդամ երկրների շրջակա միջավայրի և առողջապահության վերաբերյալ նախարարական 7-րդ համաժողովին:

**6. Քննարկված թեմաները (հարցերը)**

Հանդիպման ժամանակ քննարկվել են այնպիսի հարցեր, ինչպիսիք են.

- շրջակա միջավայրի աղտոտման պատճառով առաջացած առողջական հետևանքների հաղթահարում,
- առողջության պաշտպանություն բնության և կենսաբազմազանության պահպանման միջոցով,
- կլիմայի փոփոխության համատեքստում առողջապահական խնդիրների նկատմամբ ուշադրության մեծացում,
- շրջակա միջավայրի և առողջության հարցերով յոթերորդ նախարարական համաժողովի հռչակագրի ընդունում,
- առողջ և կայուն միջավայրերի ստեղծման խթանում,
- կառավարման մեխանիզմների ուժեղացում,
- առողջության և շրջակա միջավայրի համար կարողությունների և գիտելիքների խորացում:

**7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված և քննարկված հարցերը**

Շրջակա միջավայրի և առողջության հարցերով յոթերորդ նախարարական համաժողովը կայացել է 2023 թվականի հուլիսի 5-ից 7-ը Բուդապեշտում, Հունգարիա՝ Եվրոպական շրջակա միջավայրի և առողջության գործընթացի (EEHP) հովանու ներքո:

Չնայած շրջակա միջավայրի և առողջության քաղաքականության իրականացման 30 տարիների ընթացքում գրանցված առաջընթացին, շրջակա միջավայրի ռիսկի գործոնները դեռևս ամեն տարի ավելի քան 1,4 միլիոն վաղաժամ մահվան պատճառ են դառնում: Մարդու առողջությունն ու բարեկեցությունը անքակտելիորեն կապված են շրջակա միջավայրի վիճակի հետ:

Համաժողովի նպատակն էր հասնել ամուր քաղաքական հանձնառության՝ այս խնդիրներից բխող առողջապահական խնդիրների լուծումները արագացնելու համար: Նստաշրջանի ժամանակ կոչ է արվել իրականացնել փոփոխություններ, որոնք ներառում են.

- կառավարման մեխանիզմների նորացում,
- առողջապահական և շրջակա միջավայրի վերաբերյալ գիտելիքներով ու հմտություններով նոր աշխատուժի ձևավորում,
- միջոլորտային մոտեցումների կիրառում,
- հետազոտությունների և նորարարությունների իրականացման աջակցություն:

Եռօրյա համաժողովի մասնակիցները ներկայացրել են 2030 թվականի Կայուն զարգացման օրակարգի իրականացման ձեռքբերումներն ու մարտահրավերները, քննարկել են կլիմայական փոփոխությունների կանխարգելման և կայունության ամրապնդման նոր ռազմավարություններ և մոտեցումներ: Առանձնահատուկ ուշադրության է արժանացել երիտասարդների ակտիվ մասնակցության խթանումը՝ առողջությանը և շրջակա միջավայրին առնչվող որոշումների կայացման հարցում:

Կայացել են մի շարք նիստեր, որոնց ժամանակ քննարկվել է օդի, ջրի և հողի աղտոտվածության, վտանգավոր քիմիական նյութերի և աղմուկի հետ կապված բազմաթիվ առողջական ռիսկերի վերացմանն ուղղված հնարավոր գործողությունները, ինչպես նաև նշված մարտահրավերները հաղթահարելուն միտված քաղաքականություններն և միջամտությունները:

Նստաշրջանի ընթացքում ուշադրության են արժանացել բնության, էկոհամակարգերի և մարդու առողջության և բարեկեցության միջև կարևոր կապերի ստեղծմանը: Մասնակիցները, ովքեր կարևոր դեր են խաղում ազգային և միջազգային քաղաքականության մշակման մեջ, հնարավորություն են ունեցել կիսվել իրենց տեսակետներով, ընդգծել հիմնական նախաձեռնությունները, կիսել լավագույն փորձով և հայտարարել իրենց հանձնառությունը՝ աջակցելու հետագա գործողություններին:

Քննարկվել են շրջակա միջավայրի և առողջապահական քաղաքականության հիմնարար տեղաշարժի անհրաժեշտությունը դեպի ավելի ամբողջական, միջոլորտային մոտեցում: Սա նշանակում է վերացնել երկու հատվածների միջև ավանդական խոչընդոտներն և կիրառել ինստիտուցիոնալ բարեփոխումներ և մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան կառավարություններին լուծել բարդ, փոխկապակցված շրջակա միջավայրի, կլիմայի, բնության և առողջապահական խնդիրները: Նիստը ժամանակ անդրադարձ է կատարվել խթանիչ գործոնների վրա, ինչպիսիք են մասնագիտական հնարավորությունների զարգացումը կամ ընդլայնումը, կրթական ծրագրերում մասնագիտական նոր պրոֆիլների ներդրումը, հետազոտությունները և առողջապահության համար պատասխանատու հաստատություններում նոր ղեկավարության ձևավորումը:

«Կառավարման, կարողությունների և գիտելիքների ամրապնդում առողջության և շրջակա միջավայրի համար» նիստի ժամանակ հանդես եմ եկել ելույթով, որում ներկայացրել եմ Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2021 թվականի մայիսի 13-ին կողմից ընդունված «Կլիմայի փոփոխության ազդեցությանը հարմարվելու ազգային ռազմավարությունը», որի նպատակն է նպաստել Հայաստանում կլիմայական ռիսկերի

նվազեցմանը և կառավարմանը: Ռազմավարության ընդունման նպատակն է երկարաժամկետ հեռանկարում հանգեցնել խնայողությունների, սոցիալական առողջության և անվտանգության բարելավման, աղետների վնասների նվազեցման, նոր գործարար հնարավորությունների առաջացման և ներդրումների ավելի մեծ անվտանգության:

Հարմարվողականության գործողությունները առաջնահերթություն են ստացել՝ հիմնվելով կլիմայի փոփոխության նկատմամբ ոլորտների խոցելիության վրա, և այդ ոլորտներից մեկը մարդու առողջությունն է: Այլ ոլորտներն են՝ բնական էկոհամակարգերը (ներառյալ անտառային էկոհամակարգերը, կենսաբազմազանությունը և հողի ծածկույթը), ջրային ռեսուրսների կառավարումը, գյուղատնտեսությունը (ներառյալ ձկնաբուծությունը և անտառները), էներգետիկան, մարդկանց բնակավայրերը և ենթակառուցվածքները, զբոսաշրջությունը:

Առողջապահության ոլորտի խոցելիությունը կլիմայի փոփոխության նկատմամբ գնահատվել է իրականացված տարբեր հետազոտությունների հիման վրա.

• «Առողջության հարմարվողականության պլանավորման համար մատչելի ռեսուրսների գնահատում/գույքագրում» (Հայաստանի Ամերիկյան Համալսարան, Կանաչ Կլիմայի հիմնադրամ, ՄԱԶԾ, 2020 թ.);

• «Կլիմայի փոփոխության նկատմամբ առողջության խոցելիության գնահատում և հարմարվողականության պլանի մշակում» (Armenian Medical Association, Green Climate Fund, UNDP, 2022):

Ուսումնասիրություններ են կատարվել ջերմային ալիքների պատճառով ավելի բարձր մահացության և հիվանդացության քանակի, մարդու առողջության վրա օդի որակի ազդեցության, ջրային հիվանդությունների և վեկտորային հիվանդությունների վերաբերյալ:

Ըստ հետազոտությունների կլիմայի փոփոխությունը հանգեցնում է վտանգավոր հիդրոօդերևութաբանական երևույթների հաճախականության և ինտենսիվության, ինչպես օրինակ ջրհեղեղների հաճախացում. առատ տեղումների հետևանքով կարող են դիտվել սելավներ և սողանքներ, ինչը հանգեցնում է առողջապահական միջոցառումների իրականացման համար ֆիզիկական անհասանելիության, ինչպես նաև շտապօգնության մեքենաների ֆիզիկական մուտքի անհնարինության:

Կլիմայական ռիսկերը լուծելու և առողջապահության ոլորտում հնարավորությունները կապիտալացնելու համար կառավարությունը կլիմայի փոփոխության

հարմարվողականության նկատառումները ներառել է ոլորտի ռազմավարական զարգացման գործընթացում:

Ավելին, նման ինտեգրումը նպատակ ունի գնահատել կլիմայի հետ կապված մարտահրավերները առողջապահության ոլորտի համար և հարմարեցնել ոլորտային գործողությունները՝ կլիմայի փոփոխության ազդեցություններին դիմակայելու, հանրային առողջության պահպանման և կլիմայի նկատմամբ զգայուն հիվանդությունների կանխարգելման և վերահսկողության ապահովման համար:

Ակնկալվում է, որ ժամանակի ընթացքում առողջապահության ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրով նախատեսված մեթոդները և կլիմայի նկատմամբ զգայուն հիվանդությունների կանխարգելումն ու վերահսկումը կինտեգրվեն երկրի զարգացման պլանավորման գործընթացի շրջանակներում՝ ապահովել շարունակական և պարբերական ուշադրություն կլիմայի փոփոխության ռիսկերի վրա, որոնք վտանգներ են ներկայացնում հանրային առողջության համար տարածաշրջանային և ոլորտային մակարդակներում:

Անդրադարձել եմ նաև պետության և հասարակության կապի, հասարարակական կազմակերպությունների և տարբերի թիրախային խմբերի մասնակցության կարևորությանը: Բարձրաձայնել եմ պետության կողմից թափանցիկ գործելակերպի և առավել հաշվետվողական լինելու անհրաժեշտության մասին:

Նստաշրջանի շրջանակներում հանդիպում է կայացել ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (UNECE) գործադիր քարտուղար Դմիտրի Մարիասինի հետ, որի հետ քննարկել ենք առաջընթացը Հայաստանի Հանրապետության և UNECE գործընթացների շրջանակներում, ինչպես նաև մեկ անգամ ևս քննարկվել է ջրային Կոնվենցիայի և արձանագրությունների ստորագրման և վավերացման հարցերը, որի շրջանակներում խնդիր է դրվել վերհանել Հայաստանի Հանրապետության համար վերջիններիս ստորագրման և վավերացման դրական և բացասական կողմերը հաղորդագրությամբ, որը հնարավոր կլինի ներկայացնել Հայաստանի Հանրապետության Վարչապետին, արտաքին գործերի և շրջակա միջավայրի նախարարություններին՝ որոշում կայացնելու նպատակով:

Եվս մեկ անգամ բարձրաձայնվել է այն փաստը, որ տարածաշրջանում դեռևս այն երկրները, որոնք չեն ստորագրել և վավերացրել Կոնվենցիան, խոչընդոտ են հանդիսանում մյուս երկրների կողմից սույն գործընթացը մեկնարկելու համար: Մասնավորապես բարձրադիր գոտում գտնվող Թուրքիան այս գործընթացում մնացել է բացարձակ անմասն:

Ուստի առաջարկվել է ջանքեր գործադրել բոլոր կողմերին բանակցային սեղանի շուրջ հրավիրելու համար:

**8.Հանդիպման ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Հանդիպման ընթացքում ընդունվել է շրջակա միջավայրի և առողջության հարցերով յոթերորդ նախարարական համաժողովի քաղաքական հռչակագիրը – Բուդապեշտի հռչակագիրը, որով մասնակից երկրները իրենց պատրաստակամությունն են հայտնել ջանք գործադրել բարձրացնելու առողջապահական համակարգերի ճկունությունը և կարողությունները՝ աղետներին և ճգնաժամերին արձագանքելու և դիմակայելու համար:

Երկրները կառաջնորդվեն սույն Հռչակագրի մասը կազմող «Առողջ մարդկանց, ծաղկող մոլորակի և կայուն ապագայի ճանապարհային քարտեզը 2023–2030 թթ.»-ի դրույթներով: Ճանապարհային քարտեզում առաջարկում են մի շարք գործողություններ, որոնց իրականացումը կնպաստի կլիմայի փոփոխության հետևանքների, շրջակա միջավայրի աղտոտման և կենսաբազմազանության կորստի նվազեցմանը:

Առաջարկվել են նաև քայլեր՝ ուղղված առողջության և շրջակա միջավայրի համար մարդկային ռեսուրսների, ֆինանսավորման և գիտելիքների ամրապնդմանը: Ճանապարհային քարտեզում ներկայացված է հրատապ գործողությունների անհրաժեշտությունը և այն պարտավորությունների ցանկը, որոնք երկրները կարող են դիտարկել և ձեռնարկել միջոցներ դրանց հասնելու համար:

Հռչակագիրը նաև հնարավորություն է ստեղծում երկրներին համագործակցելու Եվրոպական շրջակա միջավայրի և առողջության գործընթացի (EEHA) միջոցով, որը կնպաստի Նախարարական համաժողովում ստանձնած տեսլականի և պարտավորությունների իրականացմանը: Գործընկերությունները հնարավորություն կստեղծի միավորել երկրներին և գործընկերներին, որոնք ընդհանուր հետաքրքրություն ունեն կոնկրետ թեմատիկ ոլորտում՝ համատեղ աշխատելու նախագծերի, կարողությունների զարգացման, դասընթացների և սեմինարների, տեխնիկական աջակցության, նորարարության և հետազոտության ոլորտներում:

**9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Մասնակիցները հայտնել են ակնկալիքներ ամրապնդելու համագործակցությունը շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ պետական իշխանությունների, ՄԱԿ-ի գործակալությունների, քաղաքացիական հասարակության և ակադեմիական շրջանակների միջև:

Շահագրգիռ կողմերը պատրաստակամություն են հայտնել կիսել իրենց գիտելիքները, ուժը, փորձը և ռեսուրսները բարդ մարտահրավերներին դիմակայելու և այս Համաժողովում ստանձնած պարտավորությունները կյանքի կոչելու համար:

Նիստի ընթացքում ստեղծվել են սիներգիաներ ընդհանուր նպատակներին հասնելու համար:

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ՝

Գայանե Գաբրիելյան